ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ԱՄ-ԱՀ -ԳՀԱՇՁԲ-33/21

ք.Ապարան «16» 06 2021 թ.

Ապարանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Կ.Եղիազարյան-ի, ով գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐՇԻՆ 65» ՍՊԸ- ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Եղյանի, ով գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Ապարանի համայնքապետարանի կարիքների համար Նիգավան վարչական շրջանի հանդիսությունների սրահի վերահատակագծման,վերանորոգման և Վարդենուտ վարչական շրջանի մշակույթի տան դահլիճի վերանորոգման աշխատանքների** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 70 օրացուցային օր: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-

ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13.381.522.5 (տասներեք միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար հինգ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման

մանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար, գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ապարանի համայնքապետարան	«ԱՐՇԻՆ 65» ՍՊԸ
Ք. Ապարան, Բաղրամյան 26	Հասցե՝ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ
ՀՎՀՀ 05022969	ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ 2 ԲՆ.84
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01023355
ՀՀ 900452101158	Բանկ՝ «Վիրտինբանկ» ՓԲԸ
Համայնքի ղեկավար Կ. Եդիազարյան	Հ/Հ՝ 2472240283769000
	Տնօրեն՝ Արշակ Գեղյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«16» 06 2021թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱՀ -ԳՀԱՇՁԲ-33/21 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԻԳԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ՎԵՐԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ,ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԿԱՏԱՐՄԱՆ

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդհանուր արժեքը հազար դրամ	Ընդհանուր արժեքը տոկոսային
1	2	3	4	5	6	7
	1. Քանդման աշխատանքներ					
1	Գոյություն ունեցող մետաղական բռնաձողերի ապամոնտաժում	գծմ	6.8	0.22	1.496	
2	Գոյություն ունեցող գաջի սվաղի քանդում	100մ²	2.88	10.209	29.4032	
3	Շին աղբի հավաքում և բարձում մեքենային ձեռքով	տն	14	1.00	14.00	
4	Տեղափոխում 3կմ	տն	14	1.00	14.00	
	1. Ընդամենը ըստ տոկոսների					**0.93%**
	2. Կառուցման աշխատանքներ					
1	Արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղից (0.55մմ հաստ.)	100մ²	0.025	32.00	8.00	
2	Ալյումինե բռնաձողերի տեղադրում h=0.9մ (երեք ձողով)	100մ	0.08	450.00	36.00	
3	Պատերի սվաղ գաջի շաղախով (լավորակ)	100մ²	2.88	120.904	348.2024	
4	Մուտքի հովհանոցի առաստաղի սվաղում g/ա շաղախով	100մ²	0.145	185.00	26.825	
5	Արտաքին պատերի սվաղում g/ա շաղախով	100մ²	0.89	185.00	164.65	
6	Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով	100մ²	0.89	95.00	84.55	
7	Արտաքին շեպերի սվաղում g/ա շաղախով	100մ	0.288	185.00	53.28	
8	Արտաքին շեպերի ներկում ֆասադային ներկով	100մ²	0.029	95.00	2.755	
9	Սանդղահեծանների շրջափակում "Ռաբիցա" տիպի ցանցով	100մ²	0.067	137.00	9.179	
10	Սանդղահեծանների սվաղում g/ավազե շաղախով	100մ²	0.067	185.00	12.395	

11	Արտաքին ինվենտարային տախտակամածի մոնտաժում և այնուհետև ապամոնտաժում	100մ²	0.63	125.00	78.75	
	2. Ընդամենը ըստ տոկոսների					**13.02%**
	3. Միջնորմներ					
1	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ - 15 բետոնից	մ³	0.176	32.50	5.72	
2	Ամրան Ա - 240C 6մմ	տն	0.0055	340.491	1.8727	
3	Ամրան Ա - 500C 12մմ	տն	0.00756	340.503	2.5742	
4	Միջնորմների շարում 200մմ հաստ. պեմզաբլոկներով	մ³	2.8	18.75	52.50	
5	Միջնորմների շարում 100մմ հաստ. պեմզաբլոկներով	մ³	4.28	27.48	117.6144	
6	Միջնորմների ամրանավորում ամրան Ա - 240C 8մմ	տն	0.09194	340.50	31.3056	
7	Կառուցվող պեմզաբլոկի անցքերի լցում թեթև Վ-7.5 բետոնով	մ³	0.95	48.40	45.98	
8	Գոյություն ունեցող բացվածքների շարում d=500մմ	մ³	4.57	29.16	133.261	
9	Գոյություն ունեցող շարվածքի ամրանավորում ամրան Ա - 240C 8մմ	տն	0.037	340.500	12.5985	
	3. Ընդամենը ըստ տոկոսների					**6.37%**
	4. Հատակներ					
1	Ց/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 30մմ հաստ.	100մ²	2.722	135.00	367.470	
2	Ց/ա հարթեցուցիչ շերտի կառուցում 20մմ հաստ.	100մ²	0.096	135.00	12.90	
3	Ջրամեկուսիչ շերտի իրականացում CR-60 նյութով	մ²	9.6	0.48	4.608	
4	Հատակների կառուցում կերամիկական սալիկներից 4մմ սոսնձաշերտի վրա	100մ²	0.096	386.5	37.104	
5	Հատակների կառուցում պրեսգրանիտե սալերով 5մմ սոսնձաշերտի վրա	100մ²	2.626	388.00	1018.888	
6	Պրեսգրանիտե սալերից շրիշակների իրականացում 10սմ լայն.	100մ²	0.1255	354.00	44.427	
7	Բետոնե աստիճանների տեղադրում (300*150մմ)	մ	30	6.54	196.20	
8	Բետոնե աստիճան 1200*300*150մմ	հատ	25.0	6.1339	153.349	
	4. Ընդամենը ըստ տոկոսների					**28.79%**
	5. Բացվածքներ					
1	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (բացվող), ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ (սպիտակ, 60մմ հաստ.)	մ²	3.6	22.50	81.60	

2	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (չբացվող), ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ (սպիտակ, 60մմ հաստ.)	մ²	4.32	22.50	97.20	
3	Սպիտակ պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 400մմ լայն.	գծմ	3.6	3.8845	13.9842	
4	Մետաղապլաստե դռների տեղադրում, հայկական արտադրություն, (սպիտակ, 60մմ հաստ.)	մ²	11.67	22.50	262.575	
	5. Ընդամենը ըստ տոկոսների					**7.19%**
	6. Հարդարման աշխատանքներ					
1	Առաստաղների երեսապատում գաջի շաղախով	100մ²	3.076	303.2052	932.6591	
2	Շեպերի սվաղ գաջի շաղախով (լավորակ)	100մ²	0.4113	250.00	102.825	
3	Պատերի սվաղում g/ա շաղախով (լավորակ)	100մ²	0.311	120.00	37.32	
4	Շեպերի սվաղում g/ա շաղախով	100մ²	0.0288	125.00	3.60	
5	Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով (լավորակ)	100մ²	6.112	25.00	152.80	
6	Առաստաղների ջրադիսպերսիոն ներկով (լավորակ)	100մ²	3.076	25.00	76.90	
7	Շեպերի յուղաներկում (լավորակ)	100մ²	0.4401	35.00	15.4035	
8	Պատերի երեսպատում կերամիկական սալիկներով 200*300մմ (h=2.8մ)	100մ²	0.311	70.00	21.77	
	6. Ընդամենը ըստ տոկոսների					**21.21%**
	7. Ջրագծի ներքին տեղամաս					
1	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում d=32*3.0մմ, pn10, փորձարկումով	մ	4	0.45	1.80	
2	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում d=25*2.3մմ, pn10, փորձարկումով	մ	4	0.40	1.60	
3	Պոլիպրոպիլենային խողովակների տեղադրում d=20*1.9մմ, pn10, փորձարկումով	մ	9	0.35	3.15	
4	Գնդային փականի տեղադրում d=32մմ	հատ	1	1.30	1.30	
5	Լվացարանի ծորակ d=15մմ	հատ	2	0.90	1.80	
6	Զուգարանային ծորակ d=15մմ	հատ	4	0.90	3.60	
7	Կցամաս պտուտակով d=20մմ	հատ	6	0.50	3.00	
8	Անցում 32*25	հատ	1	0.22	0.22	
9	Անցում 25*20	հատ	1	0.2	0.2	
10	Եռաբաշխիչ 32*20*32մմ	հատ	1	0.18	0.18	

11	Եռաբաշխիչ 25*20*25մմ	հատ	3	0.15	0.45	
12	Եռաբաշխիչ 20*20*20մմ	հատ	1	0.14	0.14	
13	Արտուղղում d=32մմ	հատ	1	0.15	0.15	
14	Արտուղղում d=25մմ	հատ	1	0.14	0.14	
15	Արտուղղում d=20մմ	հատ	3	0.12	0.36	
16	Արտուղղում ամրակով d=20մմ	հատ	6	0.18	1.08	
17	Անցքերի բացում պատերում	100հատ	0.06	40.00	2.40	
18	Պողպատե պաշտպանիչ պատյան d=50մմ	մ	2	1.20	2.40	
19	Սան.սարքերի միացման ռետինե խողովակ L=0.5մ, d=15մմ	հատ	6	0.60	3.60	
20	Խողովակների ամրացման պլաստմասե շրջակապ	հատ	34	1.31229	44.61806	
21	Պողպատե խողովակների յուղաներկում (2 անգամ)	100մ²	0.004	19.60	0.0784	
22	Անցքերի ցեմենտացում	մ³	0.01	2.50	0.025	
	7. Ընդամենը ըստ տոկոսների					**1.14%**
	8. Կոյուղագծի ներքին տեղամաս					
1	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում d=110*3.2մմ, փորձարկումով	մ	12	0.35	4.20	
2	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում d=50*2.2մմ, փորձարկումով	մ	12	0.25	3.00	
3	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	2	23.00	46.00	
4	Զուգարանակոնքի տեղադրում	կ-տ	4	47.7203	190.8812	
5	Չժանգոտվող հոսակների տեղադրում d=50մմ	հատ	2	3.50	7.00	
6	Եռաբաշխիչ 110*110*110մմ	հատ	4	0.28	1.12	
7	Եռաբաշխիչ 110*50*110մմ	հատ	6	0.25	1.50	
8	Արտուղղում 90° , d=110մմ	հատ	2	0.22	0.44	
9	Արտուղղում 90° , d=50մմ	հատ	6	0.20	1.20	
10	Ռետինե միջադիր d=50մմ	հատ	6	0.05	0.30	
11	Ճկախողովակ (սիֆոնով) d=50մմ	հատ	2	0.18	0.36	
12	Ճկախողովակ զուգարանակոնքի d=100մմ	հատ	4	0.35	1.40	
13	Անցքերի բացում պատերում	100հատ	0.06	25.00	1.50	
14	Անցքերի բացում միջհարկային ծածկերում	100հատ	0.02	25.00	0.50	
15	Խողովակների կառուցում ցինկապատ թիթեղից d=150մմ	մ²	0.5	3.50	1.75	

16	Զոնտ ցինկապատ թիթեղից d=150մմ	մ²	0.2	3.50	0.70	
17	Ցինկապատ անցում 150/100	հատ	1	1.20	1.20	
18	Կանգնակի երեսպատում ջրադիմացկուն գիպսակարտոնե սալերով, ցինկապատ հիմնակմախքի վրա	մ²	2.0	3.00	6.00	
19	Պողպատե պաշտպանիչ պատյան d=133մմ	մ	0.5	1.50	0.75	
20	Պողպատե պաշտպանիչ պատյանի յուղաներկում (2 անգամ)	100մ²	0.002	195.00	0.39	
21	Անցքերի ցեմենտացում	մ³	0.01	8.50	0.085	
	Դիտահոր					
22	Խճի նախաշերտի կառուցում 100մմ հաստ.	մ³	0.15	2.50	0.375	
23	Բետոնե առվակների կառուցում Վ - 7.5 բետոնից	մ³	0.2	4.50	0.90	
24	Պոլիմերավազային դիտահորի տեղադրում (առանց նյութի արժեքի)	մ³	0.81	1.00	0.81	
25	Պոլիմերավազային դիտահոր 900*900մմ	հատ	1	14.00	14.00	
26	Դիտահորի կափարիչ	հատ	1	9.00	9.00	
	8. Ընդամենը ըստ տոկոսների					**4.65%**
	9. Էլեկտրասարքավորումներ և նյութեր					
1	Էլ. վահանակ 8 տեղանոց, պլաստմասե արկղ, ներքին տեղադրման	հատ	2	45.00	90.00	
2	Երկբևեռ միաֆազ իքնավար անջատիչ Սանվ ~ 220Վ , Լանջ =63Ա	հատ	2	14.00	28.00	
3	Միաբևեռ իքնավար անջատիչ Սանվ ~ 220Վ, Լանջ =16 Ա	հատ	8	7.00	56.00	
4	Միաբևեռ իքնավար անջատիչ Սանվ ~ 220Վ, Լանջ =6 Ա	հատ	2	4.50	9.00	
5	Առաստաղային լուսատուի (կետային) տեղադրում՝ 1 հատ 9Վտ հզորության լուսադիոդային լամպով	լրա կազմ	6	5.50	33.00	
6	Պատի լուսատուի տեղադրում՝ 1հատ 18Վտ հզորության լուսադիոդային լամպով հակավանդալային	լրա կազմ	1	11.00	11.00	
7	Արտասահմանայան տիպի առաստաղի լուսադիոդային լուսատուի տեղադրում 40Վտ, 3600լմ, 596*596մմ	լրա կազմ	27	16.97449	458.3113	
8	Արտասահմանայան տիպի առաստաղի լուսադիոդային լուսատուի տեղադրում 18Վտ, 1800լմ, 596*296մմ	լրա կազմ	5	3.00	15.00	
9	Երկբևեռ վարդակ, երրորդ հողանցման հպակով, ներքին տեղադրման, Լանվ = 16Ա	հատ	20	0.60	12.00	
10	Միաստեղ միաբևեռ անջատիչ, ներքին տեղադրման	հատ	7	0.80	5.60	
11	Երկստեղ միաբևեռ անջատիչ, ներքին տեղադրման	հատ	6	0.75	4.50	

12	Տուփ անջատիչների և վարդակների	100հատ	0.33	30.00	9.90	
13	Տուփ բաժանարար, ներքին տեղադրման	100հատ	0.26	2.80	0.728	
14	Հաղորդալար պղնձե, ՊՎՔ մեկուսացումով , կտրվածքը՝ 2*2.5մմ² ՈՊԲ	100մ	1.61	75.00	120.75	
15	Հաղորդալար պղնձե, ՊՎՔ մեկուսացումով , կտրվածքը՝ 3*2.5մմ² ՈՊԲ	100մ	1.94	80.00	155.20	
	Հողանցման կոնտուր					
16	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	3.657	6.50	23.7705	
17	Բնահողի հետլիցք ձեռքով	մ³	3.657	2.00	7.314	
18	Հողանցում շերտապողպատից 40*4մմ	100մ	0.125	15.00	1.875	
19	Հողանցման էլեկտրոդներ, պողպատե անկյունակ 50*5մմ	10հատ	0.6	18.00	10.80	
20	Հողանցման ճկուն հաղորդալար 16մմ² ESUY	100մ	0.14	35.00	4.90	
	9. Ընդամենը ըստ տոկոսների					**16.70%**

Ընդամենը 6.333.283.2

ԱԱՀ 20% 1.266.656.6

Ընդամենը **7599.939.8**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար Կ. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՇԻՆ 65» ՍՊԸ
Հասցե՝ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ
ՊՈՂՈՏԱ 2 ԲՆ.84
ՀՎՀՀ՝ 01023355
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2472402837769000
Տնօրեն՝ Արշակ Եդյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արագածոտնի մարզի, Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի մշակույթի տան դահլիճի վերանորոգում

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդհանուրար ժեքը հազար դրամ	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6	7
	1. Քանդման աշխատանքներ					
1	Գոյություն ունեցող գաջի սվաղի քանդում	100մ²	1.87	9.00	16.83	
2	Պատերի մաքրում հին ներկից	100մ²	1.55	3.00	4.65	
3	Առաստաղի մաքրում հին ներկից	100մ²	2.762	5.00	13.81	
4	Շին աղբի հավաքում և բարձում մեքենային ձեռքով	տն	62	1.00	62.00	
5	Տեղափոխում 3կմ	տն	62	0.34246	21.2324	
	1. Ընդամենը ըստ տոկոսների					**2.46%**
	2. Կառուցման աշխատանքներ					
1	Արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղից (0.55մմ հաստ.)	100մ²	0.0171	255.60	4.3708	
2	Առաստաղի ծածկի սալերի կարանների սվաղում գաջի շաղախով (լավորակ)	100մ²	0.35	185.00	64.75	
3	Արտաքին շեպերի սվաղում g/ա շաղախով	100մ	0.414	145.00	60.03	
4	Արտաքին շեպերի ներկում ճակատային ներկով	100մ²	0.0414	19.4927	0.807	
5	Գոյություն ունեցող բացվածքների շարում d=450մմ	մ³	7.43	16.85	125.195	
6	Բացվածքների շարվածքի ամրանավորում ամրան Ա - 240C 8մմ	տն	0.086	340.00	29.24	
7	Արտաքին աշխատանքների համար տախտակամածի մոնտաժում և այնուհետև ապամոնտաժում	100մ²	2.83	94.9512	268.7119	
	2. Ընդամենը ըստ տոկոսների					**11.48%**
	3. Հատակներ					

1	Բետոնե նախաշերտի իրականացում Վ - 7.5 բետոնից, 100մմ հաստ.	մ³	29.72	48.568	1443.	
2	Հատակների տակ լիցքի իրականացում ավազա-կոպիճով՝ խտացումով	մ³	20	8.50	170.00	
3	Հատակների կառուցում պրեսգրանիտե սալերով 5մմ սոսնձաշերտի վրա	100մ²	2.762	220.62201	609.358	
4	Պրեսգրանիտե սալերից շրիշակների իրականացում 10սմ լայն.	100մ²	0.0675	560.00	37.80	
	3. Ընդամենը ըստ տոկոսների					**46.92%**
	4. Բացվածքներ					
1	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (բացվող), ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ (սպիտակ, 60մմ հաստ.)	մ²	5.04	17.143	86.4007	
2	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում (չբացվող), ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ (սպիտակ, 60մմ հաստ.)	մ²	23.46	17.143	402.1748	
3	Սպիտակ պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 350մմ լայն.	գծմ	14.4	2.223035	32.0117	
4	Մետաղապլաստե դռների տեղադրում, հայկական արտադրություն, (սպիտակ, 60մմ հաստ.)	մ²	7.04	17.143	120.6867	
	4. Ընդամենը ըստ տոկոսների					**13.31%**
	5. Հարդարման աշխատանքներ					
1	Պատերի գաջի սվաղի վերանորոգում	մ²	65.8	1.45	95.41	
2	Պատերի սվաղ գաջի շաղախով (լավորակ)	100մ²	1.87	185.00	345.95	
3	Շեպերի սվաղ գաջի շաղախով (լավորակ)	100մ²	0.145	185.00	26.825	
4	Պատերի ներկում ջրադիսպերսիոն ներկով (լավորակ)	100մ²	4.064	68.925	280.1112	
5	Առաստաղների ներկում ջրադիսպերսիոն ներկով (լավորակ)	100մ²	2.762	68.925	190.3708	
6	Շեպերի յուղաներկում (լավորակ)	100մ²	0.145	68.925	9.9941	
	5. Ընդամենը ըստ տոկոսների					**19.69%**
	6. Էլեկտրասարքավորումներ և նյութեր (ներքին ցանց)					
1	Էլ. վահանակ 6 տեղանոց, պլաստմասե արկղ, ներքին տեղադրման	հատ	1	35.00	35.00	
2	Երկբևեռ միաֆազ իքնավար անջատիչ Սանվ ~ 220Վ,Լանջ =40Ա	հատ	2	5.50	11.00	

3	Միաբևեռ իքնավար անջատիչ Սանվ ~ 220Վ, Լանջ =16 Ա	հատ	2	4.50	9.00	
4	Միաբևեռ իքնավար անջատիչ Սանվ ~ 220Վ, Լանջ =10 Ա	հատ	1	3.50	3.50	
5	Լուսադիոդային լուսարձակի տեղադրում 70Վտ, 220Վ 6440Լմ	լրա կազմ	18	6.50	117.00	
6	Երկբևեռ վարդակ, երրորդ հողանցման հպակով, ներքին տեղադրման, Լանվ = 16Ա	հատ	8	1.50	12.00	
7	Երկստեղ միաբևեռ անջատիչ, ներքին տեղադրման	հատ	1	1.20	1.20	
8	Տուփ անջատիչների և վարդակների	100հատ	0.09	5.00	0.45	
9	Տուփ բաժանարար, ներքին տեղադրման	100հատ	0.1	6.00	0.60	
10	Հաղորդալար պղնձե, ՊՎՔ մեկուսացումով , կտրվածքը՝ 2*2.5մմ² ՊՊԲ	100մ	1.23	41.605	51.1741	
11	Հաղորդալար պղնձե, ՊՎՔ մեկուսացումով , կտրվածքը՝ 3*2.5մմ² ՊՊԲ	100մ	0.84	41.605	34.9482	
12	Հաղորդալար պղնձե, ՊՎՔ մեկուսացումով , կտրվածքը՝ 1*10մմ² ՊԲ-3	100մ	0.3	70.00	21.00	
	6. Ընդամենը ըստ տոկոսների					**6.14%**

Ընդամենը 4.817.985.6

ԱԱՀ 20% 963.597.12

Ընդամենը 5.781.582.7

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար՝ Կ. Երիցազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՇԻՆ 65» ՍՊԸ
Հասցե՝ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ 2 ԲՆ.84
ՀՎՀՀ՝ 01023355
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247240283769000
Տնօրեն՝ Արշան Ծոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 16 » 06 2021թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱՀ -ԳՀԱՇՁԲ-33/21 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԻԳԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ՎԵՐԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ,ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՎԱՐԴԵՆՈՒՏ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Նիգավան վարչական շրջանի հանդ.սրահի վրահատակագծման և վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 70 օրացուցային օրվա ընթացքում
2	Վարդենուտ վարչական շրջանի մշակույթի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 70 օրացուցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար Ն. Եղիազարյան

/ստորագրություն/
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐՇԻՆ 65» ՍՊԸ
Հասցե՝ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ 2
ԲՆ.84
ՀՎՀՀ՝ 01023355
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247240283769000
Տնօրեն՝ Արշակ Եղյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« 16 » 06 2021թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱՀ -ԳՀԱՇՁԲ-33/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
Հ/Հ	(CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451700/8	Նիգավան վարչական շրջանի հանդ.սրահի վրահատակագծման և վերանորոգման աշխատանքներ	7.599.939.8	7.599.939.8	7.599.939.8	7.599.939.8	7.599.939.8	7.599.939.8	7.599.939.8	7.599.939.8
2	45451700/9	Վարդենուտ վարչական շրջանի մշակույթի տան դահլիճի վերանորոգման աշխատանքներ	5.781.582.7	5.781.582.7	5.781.582.7	5.781.582.7	5.781.582.7	5.781.582.7	5.781.582.7	5.781.582.7

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Ք. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900452101158
Համայնքի ղեկավար՝ Ս. Եղիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՐՇԻՆ 65» ՍՊԸ
Հասցե՝ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱ 2
ԲՆ.84
ՀՎՀՀ՝ 01023355
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247240283769000
Տնօրեն՝ Արշակ Եղյան

/ստորագրություն/
Կ.Տ